



## Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 7

Հունվար 2011

Պե տակ ան գնումներ

# Մասնակիցների ընտրություն

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ընդհանուր համատեքստը
- Մասնակիցների ընտրության չափորոշիչները
- Ընդհանուր պահանջներ
- Տնտեսական և ֆինանսական դրությունը
- Տեխնիկական և/կամ մասնագիտական ունակություններ
- Կարճ ցուցակի կազմումը
- Բացակայող կամ թերի ապացույց
- Հաստատված մասնակիցների պաշտոնական ցուցակ
- Ընտրության համար ռազմավարության սահմանում

Պե տակ ան պատվիրատուի համար կարևոր է ապահովել, որ վերջինս պայմանագիր կնքի այնպիսի մասնակցի հետ, որն կարող է կատարել պայմանագիրը: Այսպիսով, պետական պատվիրատուն կարող է ստուգել, օրինակ, մասնակցի իրավունակությունը՝ հիմնական մասնակցության պահանջներին համապատասխանելու առումով, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսները, մասնագիտական փորձառությունը, և տեխնիկական միջոցներին ու բացառել գնումների ընթացակարգից այն մասնակիցների մասնակցությունը, որոնք չեն բավարարում նշված պահանջներին: Մա հայտնի է որպես մասնակցության իրավունքի և որակավորման չափորոշիչների ընթացակարգ:

Մասնակիցների ընտրությունը հիմնականում ներառում է երկու առանձին փուլ: Առաջին հերթին պետական պատվիրատուն սահմանում է, թե արդյոք կան հիմքեր բացառելու մասնակցի մասնակցությունը: Այնուհետև պետական պատվիրատուն շարունակում է քննարկել, թե արդյոք մասնակիցը, որը ունի մասնակցության իրավունք, բավարարում է որակավորման պահանջներին՝ որպես ընտրված մասնակից ճանաչվելու համար: Այս մասնակիցները այնուհետև կա՛մ կիրավիրվեն ներկայացնելու հայտերը, կա՛մ բանակցելու կամ մասնակցելու երկխոսությանը: Բաց ընթացակարգի դեպքում, արդեն իսկ ներկայացված հայտերը կգնահատվեն:

Մասնակիցների ընտրությունը նշանակում է ընթացակարգ՝ գնահատելու և որոշելու, թե որ մասնակիցներին են որակավորված՝ պայմանագիրն իրականացնելու համար: Այս ընթացակարգը պետք է իրականացվի՝ կիրառելով ընտրության օբյեկտիվ, ոչ խտրական և թափանցիկ չափորոշիչներ, որոնք նախօրոք սահմանվել են պետական պատվիրատուի կողմից և բացահայտվել մասնակիցների համար:

Հրահանգը զգալի չափով սահմանափակում է պետական պատվիրատուի իրավասությունը այս ոլորտում. այն թվարկում է ընտրության չափորոշիչները, որոնք պետական պատվիրատուն կարող է կիրառել, սահմանում է այն փաստաթղթերը/ապացույցները, որոնք պետական պատվիրատուն կարող է պահանջել մասնակցից՝ հաստատելու, որ սահմանված չափորոշիչները բավարարված են, սահմանում է նաև ընտրության գործընթացին վերաբերող ընդհանուր կանոնները:

Հրահանգը կոչված է ապահովել, որ ընտրության գործընթացը հնարավորություններ չընձեռի պետական պատվիրատուին՝ թաքցնելու խտրականությունը, և որ մասնակիցներին տրված են մասնակցության արդար հնարավորություններ: Հիմնական նպատակն է՝ ապահովել, որ միջհամայնքային առևտուրը սահմանափակված չլինի, և որ Պայմանագրի՝ ծառայությունների մատուցման ազատության և հիմնադրման ազատության սկզբունքները պահպանվեն:

## **Ընտրության ի՞նչ չափորոշիչներ կարող են օգտագործվել:**

Միայն հետևյալ չափորոշիչները կարող են օգտագործվել պե տակ ան պատվիրատուի կողմից՝ սահմանելու, թե արդյոք մասնակիցը որակավորված է որոշակի պայմանագիր իրականացնելու համար.

- Մասնակցի մասնակցության իրավունքը.
  - Մասնակցության իրավունքի պարտադիր պայմաններ
  - Մասնակցության իրավունքի կամընտրական պայմաններ
- մասնագիտական գործունեության իրականացման համապատասխանությունը կնքվելիք պայմանագրով նախատեսված գործունեությանը
- տնտեսական և ֆինանսական դրությունը
- տեխնիկական և/կամ մասնագիտական ունակությունը

**Մասնակցության իրավունք . Մասնակցության իրավունքի պարտադիր պայմաններ.**

Պետական պատվիրատուն պարտավոր է պայմանագրի շնորհման ընթացակարգի մասնակցությունից բացառել այն մասնակիցներին, որոնք դատապարտվել են վերջնական վճռով՝ քրեական գործունեության հետևյալ տեսակներից մեկի կամ մի քանիսի համար՝

- մասնակցությունը կազմակերպված հանցավոր խմբում
- Կաշառակերություն
- Խարդախություն
- փողերի լվացում

**Մասնակցության իրավունք. . Մասնակցության իրավունքի կամընտրական պայմաններ.**

Պետական պատվիրատուին իրավասու, բայց պարտավոր չէ գնման գործընթացին մասնակցությունից բացառել այն մասնակիցներին, որոնք

- Ա. սնանկ են կամ ցանկացած համանման իրավիճակում են՝ ազգային օրենսդրության կամ կանոնակարգերի համաձայն
- Բ. սնանկության հայտարարման գործընթացների կամ նման ընթացակարգերի սուբյեկտ են՝ ազգային իրավունքի կամ կանոնակարգերի համաձայն
- Գ. դատապարտվել են այնպիսի վճռով, որը մտել է օրինական ուժի մեջ, իրենց մասնագիտական գործունեության հետ կապված խախտման համար՝ տվյալ երկրի իրավական դրույթների համաձայն
- Դ. մեղավոր են մասնագիտական գործառույթների չիրականացման դեպքի համար, որն ապացուցվել է ցանկացած միջոցով, և որը պետական պատվիրատուն կարող էր հայտնաբերել
- Ե. չեն կատարել պարտականությունները իրենց կամ պետական պատվիրատուի հիմնադրման երկրում սոցիալական ապահովության գումարների վճարման հետ կապված՝ տվյալ երկրի իրավական դրույթների համաձայն
- Զ. չեն կատարել պարտականությունները՝ իրենց կամ պետական պատվիրատուի հիմնադրման երկրում հարկերի վճարման հետ կապված՝ տվյալ երկրի իրավական դրույթների համաձայն
- Է. Մեղավոր են տեղեկատվության խեղաթյուրման համար, որը պահանջվել է մասնակցի ընտրության նպատակով կամ չեն տրամադրել այդպիսի տեղեկատվություն:

Ազգային օրենսդրությունը կարող է այս հիմքերից մի քանիսը կամ բոլորը դարձնել մասնակցության իրավունքի պարտադիր պայմաններ:

**Ի՞նչ փաստաթղթեր կարող են պահանջվել մասնակիցներից՝ ապացուցելու, որ նրանք չեն համապատասխանում մասնակցության իրավունքի պարտադիր կամ կամընտրական պայմաններին:**

Թափանցիկության սկզբունքին համապատասխան՝ պետական պատվիրատուն պետք է հրավերով սահմանի մասնակցության իրավունքի պարտադիր կամ կամընտրական պայմանների և մասնակիցներից պահանջվող այն տեղեկատվությունը, որն ապացուցում է, որ նրանք չեն համապատասխանում մասնակցության իրավունքի պայմաններին:

Պետական պատվիրատուն պարտավոր է որպես բավարար ապացույց՝ առ այն, որ մասնակիցը չի համապատասխանում մասնակցության իրավունքի պարտադիր կամ կամընտրական պայմաններից որևէ մեկին, կիրառել Հրահանգում թվարկված ապացույցների տեսակները:

Ընդհանուր առմամբ, մասնակցությանը իրավունքի պարտադիր հիմքերի հետ կապված՝ այս ապացույցը պետք է ստացվի դատական արձանագրությունից կամ դրան համարժեք որևէ նյութից քաղվածքի ձևով, կամ եթե երկիրը չի տրամադրում այդպիսի փաստաթուղթ, հավաստման կամ պաշտոնական հայտարարության ձևով: Անհրաժեշտության դեպքում պետական պատվիրատուն պետք է մասնակցին ներկայացնի փաստաթուղթ/ապացույց ներկայացնելու պայման, այն մասին, որ վերջինս չի համապատասխանում մասնակցության իրավունքի պարտադիր պայմաններից որևէ մեկին:

Մասնակցության իրավունքի կամընտրական պայմանների հետ կապված՝ փաստաթղթի/ապացույցի տեսակները կարող են տարբերվել՝ կախված տվյալ կամընտրական պայմաններից: Մասնագիտական գործառույթների չիրականացման դեպքի և տեղեկատվության խեղաթյուրման հետ կապված՝ պետական պատվիրատուն պետք է սահմանի փաստաթղթի/ապացույցի ընդունելի տեսակները:

**Այլ անդամ երկրներում հիմնադրված մասնակիցները:** Գործնականում պետական պատվիրատուի համար կարող է դժվար լինել՝ սահմանել փաստաթղթերի/ապացույցի տեսակներ, որոնք այլ անդամ-պետություններում հիմնադրված մասնակիցներին ի վիճակի կլինեն ներկայացնել՝ ապացուցելու, որ նրանք չեն համապատասխանում մասնակցության իրավունքի պարտադիր կամ կամընտրական պայմաններից որևէ մեկին և պարզել այն մարմինները, որոնք իրավասու են տրամադրել այս փաստաթղթերը/ապացույցները իրենց ազգային օրենքներին համապատասխան:

Տեղեկատվության հասանելիությանն օժանդակելու համար ԵՄ տարբեր անդամ երկրներում, Հանձնաժողովի Ծառայությունները (ԳԴ-Ներքին Շուկան) մշակել է հարցաշար, որը լրացվել է մի քանի անդամ երկրների կողմից և որը պարունակում է համապատասխան տեղեկատվություն: Լրացված հարցաշարերը կարող են ներբեռնվել հետևյալ համացանցային էջից.

[http://ec.europa.eu/internal\\_market/publicprocurement/2004\\_18/index\\_en.htm](http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/2004_18/index_en.htm)

## **Ի՞նչ ընդհանուր պահանջներ են կիրառվում որակավորման չափորոշիչների կիրառման և կատարման փուլում :**

Թափանցիկության սկզբունքին համապատասխան՝ պետական պատվիրատուն պետք է հրավերով սահմանի որակավորման չափորոշիչները և համապատասխան տեղեկատվությունը, որը պետք է տրամադրվի:

Պետական պատվիրատուին իրավասու, բարձր պարտավոր չէ գնահատել մասնակիցների մասնագիտական գործունեությունը համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը, ինչ, տնտեսական և ֆինանսական դրությունը, տեխնիկական/մասնագիտական ունակությունը: Պետական պատվիրատուն, հետևաբար, ինքնուրույն է որոշում իր կողմից սահմանվող պահանջները՝ թույլատրված որակավորման չափորոշիչների սահմաններում:

Չափանիշները պետք է կապված լինեն պայմանագրի առարկայի հետ և բխեն դրանից: Այնպիսի չափորոշիչներ սահմանելը, որոնք անհրաժեշտ չեն կամ անհամապատասխան են, կարող են գրավել որակավորում չունեցող մասնակիցների կամ բացառել որակավորում ունեցող մասնակիցներին մասնակցությունից:

Նվազագույն արտադրական հզորության ամրագրումը, որին պետք է բավարարի մասնակիցը, թողնված է պետական պատվիրատուի հայեցողությանը: Այնուամենայնիվ, եթե պետական պատվիրատուն որոշի ամրագրել նվազագույն արտադրական հզորություն, այն պետք է նաև կապված լինի պայմանագրի *առարկայի* հետ, բխի դրանից և սահմանված լինի հրավերով:

Ոչ մի դեպքում որակավորման սահմանված չափորոշիչները չեն կարող փոխվել կամ դրանցից բացառում թույլ չի կարող տրվել մասնակցի ընտրության գործընթացի ժամանակ: Այս փուլում հրավերով սահմանված որակավորման չորոշիչները պետք է կիրառվեն, ինչպես որսահմանված են:

## **Ինչպե՞ս ենք մենք կիրառում ընտրության նշված չափորոշիչները:**

### **Մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը**

Պետական պատվիրատուն կարող է ստուգել, թե արդյոք մասնակիցները ընդհանուր առմամբ ի վիճակի են իրականացնելու մասնագիտական գործունեությունը, պահանջելով նրանցից ապացուցել, որ նրանք ներգրավված են առևտրային կամ մասնագիտական գրանցամատյանների մեջ՝ իրենց հիմնադրման անդամ երկրներում: Եթե որևէ համապատասխան գրանցամատյան գոյություն չունի այս երկրներում, մասնակիցները կարող են ներկայացնել հավաստում կամ հավաստագիր՝ իրենց ազգային օրենքների դրույթներին համապատասխան: ԵՄ յուրաքանչյուր անդամ երկրի համար գրանցամատյանները և համապատասխան հավաստումները կամ հավաստագրերը թվարկված են Հրահանգի հավելվածներում: Պետական պատվիրատուն կարող է չպահանջել ԵՄ այլ անդամ երկրում հիմնադրված մասնակցին՝ ներգրավված լինել առևտրային կամ մասնագիտական գրանցամատյանի մեջ պետական պատվիրատուի երկրում: Այս պահանջը

կխախտեր և՛ Հրահանգը, և՛ ծառայությունների մատուցման ազատության սկզբունքը:

### **Տնտեսական և ֆինանսական դրությունը**

Պետական պատվիրատուն կարող է հաշվի առնել մասնակցի տնտեսական և ֆինանսական դրությունը: Տնտեսական և ֆինանսական դրության հատուկ չափորոշիչը պետք է ուղղված լինի՝ գնահատելուն, թե արդյոք մասնակիցներին ունեն բավարար ֆինանսական ռեսուրսներ (պայմանագրի գործողության ընթացքում), ինչպիսիք են դրամարկղում առկա կանխիկ դրամը, վարկային գիծը կամ ցանկացած այլ ձևով կարող են կատարել պայմանագիրը:

**Կարո՞ղ է արդյոք մասնակիցը հիմնվել այլ կազմակերպությունների ռեսուրսների վրա՝ ապացուցելու իր տնտեսական և ֆինանսական դրությունը:** Այո, եթե հատուկ պայմանարերի հետ կապված, մասնակիցը կարող է հիմնվել այլ կազմակերպության հզորության վրա: Այս դեպքում այն պետք է ապացուցի, որ այն իր տիրապետության տակ կունենա անհրաժեշտ ռեսուրսները. օրինակ, այդ նպատակով այս կազմակերպությունների կողմից ձեռնարկությունների ստեղծմամբ: Այս հնարավորությունը թույլ է տալիս մասնակցին հիմնվել դուստր ընկերությունների տնտեսական և ֆինանսական ռեսուրսների վրա, ինչպես նաև ենթակապալառուների կամ ցանկացած այլ կազմակերպության, որն իր ռեսուրսները փաստացի հասանելի է դարձրել մասնակցի համար: Մասնակիցների խումբը նույնպես կարող է նույն պայմաններով հիմնվել խմբի մասնակիցների կամ այլ կազմակերպությունների հզորության վրա:

**Ապացույց, որը կարող է պահանջվել մասնակիցներին՝ որպես ապացույց իրենց տնտեսական և ֆինանսական դրության:** Հրահանգը նախատեսում է ապացույցի այնպիսի տեսակների ցուցակ, որոնք, որպես կանոն, պետական պատվիրատուն կարող է պահանջել մասնակիցներից՝ որպես իրենց տնտեսական և ֆինանսական դրության ապացույց: Այնուամենայնիվ, այս ցուցակը միայն օրինակելի է և սպառիչ չէ: Հետևաբար, պետական պատվիրատուն կարող է նաև պահանջել Հրահանգում թվարկվածից բացի այլ ապացույց, պայմանով, որ այն պետք է համապատասխանի պետական գնումների հիմնական սկզբունքներին: Հրահանգը հստակորեն պահանջում է, որ մասնակցից պահանջվող ապացույցը/տեղեկատվությունը կապված լինի պայմանագրի առարկայի հետ և բխի դրանից::

### **Տեխնիկական և/կամ մասնագիտական ունակություններ**

Պետական պատվիրատուն կարող է հաշվի առնել մասնակցի տեխնիկական և/կամ մասնագիտական ունակությունը: Հատուկ տեխնիկական և/կամ մասնագիտական ունակության չափորոշիչները պետք է ուղղված լինեն գնահատելու, թե արդյոք մասնակիցներին ունեն համապատասխան տեխնիկական և/կամ մասնագիտական ունակություն (հմտություններ, սարքավորում, գործիքներ, աշխատուժ, անցյալ փորձ, և այլն)՝ իրականացնելու համար կնքվելիք պայմանագիրը:

**Ապացույցը, որը կարող է պահանջվել մասնակիցներից՝ որպես ապացույց իրենց տեխնիկական և/կամ մասնագիտական ունակությունների.** Հրահանգը սահմանում է ապացույցների սպառիչ ցանկ, որոնք պետական պատվիրատուն կարող է

պահանջել մասնակիցներից՝ որպես ապացույց նրանց տեխնիկական և/կամ մասնագիտական ունակության: Քանի որ ցուցակը սպառիչ է, պետական պատվիրատուն չի կարող պահանջել թվարկածից բացի՝ որևէ այլ ապացույց: Այնուամենայնիվ, պետական պատվիրատուն պարտավոր չէ պահանջել թվարկված բոլոր ապացույցները, այլ միայն այն ապացույցները, որոնք անհրաժեշտ են՝ գնահատելու մասնակիցների տեխնիկական և/կամ մասնագիտական ունակությունները՝ կապված կնքվելիք պայմանագրի հետ: Ապացույցների այս ցուցակը բաժանված է ըստ պայմանագրի առարկայի (այսինքն՝ մատակարարում, աշխատանքներ կամ ծառայություններ):

### **Ինչ կարող է անել պետական պատվիրատուն, եթե ապացույցը բացակայում է կամ թերի է:**

Հրահանգը հստակորեն սահմանում է, որ պետական պատվիրատուին թույլատրված է առաջարկել մասնակիցներին *լրացնել* կամ *պարզաբանել* ներկայացված ապացույցը: Հրահանգը չի նշում, թե ինչ է հասկացվում “լրացուցիչ” ապացույցի կամ “պարզաբանման” հասկացության տակ: Շահավետ հայտը մերժելն այն պատճառով, որ մասնակիցը չի ներկայացրել պետական պատվիրատուի կողմից պահանջված ապացույցի որոշակի մաս, կլինի արդյունավետ գնումների սկզբունքի դեմ: Մյուս կողմից, բացակայող ապացույց փնտրելը կարող է լինել շատ ժամանակատար և կերկարաձգի շահի արտահայտման գնահատման կամ հայտերի գնահատման համար հատկացված ժամանակը, եթե ստիպված լինեն սպասել մինչև բոլոր պահանջված ապացույցների ներկայացվելը: Խելամիտ մոտեցում է՝ թույլատրել պետական պատվիրատուին՝ պահանջել լրացուցիչ ապացույց, պայմանով, որ այն կվերաբերի արդեն իսկ ներկայացված ապացույցին և ընտրության նախասահմանված չափորոշիչներին: Խորհուրդ է տրվում նաև պետական պատվիրատուին թույլատրել պարզաբանել արդեն իսկ տրամադրված ապացույցը, պայմանով, եթե ներկայացված ապացույցը պարունակում է անհամապատասխան կամ հակասական տեղեկատվություն, պարզ չէ կամ պարունակում է բացթողումներ:

Գործնականում մասնակիցների ի, ինչպես նաև պետական պատվիրատուի բեռը թեթևացնելու համար կարող է անհրաժեշտություն առաջանալ սահմանափակելու ներկայացված ապացույցի ստուգումը: Այնուամենայնիվ, ԵՄ որոշ անդամ երկրներում ազգային օրենսդրությունը հատուկ սահմանում է, թե ինչպես պետք է պետական պատվիրատուն կարգավորի այս խնդիրը:

### **Թույլատրված է արդյոք կարճ ցուցակների կազմումը:**

Թույլատրվում է որևէ կարճ ցուցակների կազմել մասնակիցների կարճ ցուցակներ, որոնք հետագայում հրավիրվում են մրցույթի/բանակցությունների/երկխոսության վարման: Այդ դեպքում պետական պատվիրատուն պետք է հաշվի առնի հետևյալ խնդիրները.



Այն պետք է կիրառի օբյեկտիվ և ոչ խտրական չափորոշիչներ (կամ մեթոդալոգիաներ)

- Միայն Հրահանգով թույլատրված օբյեկտիվ և ոչ-խտրական չափորոշիչները կարող են կիրառվել մասնակիցների ընտրության համար: Հետևաբար, ցանկացած չափորոշիչ, որը հենց Հրահանգով թույլատրված չափորոշիչների սահմաններից դուրս է, չի թույլատրվում:
- Այն պետք է հաշվի առնի դրանց համապատասխան ֆինանսական կամ տեխնիկական հզորությունը: Այս վերլուծությունը կհանգեցնի որակավորված մասնակիցների համապատասխան դասակարգմանը, այսպիսով հնարավորություն տալով պետական պատվիրատուին՝ որոշելու այն մասնակիցներին, որոնք լավագույն որակավորումն ունեն՝ իրականացնելու շնորհվելիք պայմանագիրը:
- Որակավորված մասնակիցների համապատասխան դասակարգումը սահմանելու և որոշելու համար, թե որակավորված մասնակիցներից որոնք պետք է հրավիրվեն մրցույթի/բանակցությունների/երկխոսության վարման, պետական պատվիրատուն կարող է նաև մշակել մեթոդալոգիաներ՝ հիմնված կշռման/գնահատման համակարգի վրա:
- Պետական պատվիրատուից պահանջվում է հրավերով նախատեսել օբյեկտիվ և ոչ խտրական չափորոշիչներ և մեթոդներ, որոնք վերջինս մտադիր է կիրառել կարճ ցուցակներ կազմելու համար: Այս պահանջն ուղղված է՝ երաշխավորելու հավասար մասնակցության և թափանցիկության սկզբունքները և սահմանափակելու պետական պատվիրատուի կողմից չարաշահման և հայեցողական մոտեցման հնարավորությունները:

### **Կարո՞ղ են արդյոք անդամ երկրները սահմանել և օգտագործել հաստատված մասնակիցների պաշտոնական ցուցակներ:**

Հրահանգը թույլատրում է ԵՄ անդամ երկրներին՝ ունենալ հաստատված մասնակիցների ցուցակներ: Ընդհանուր առումով, գրանցման այս համակարգերը պետք է սահմանվեն և գործարկեն Հրահանգում սահմանված՝ ընտրության թույլատրելի չափորոշիչների կանոններին համապատասխան: Պաշտոնական ցուցակում գրանցված մասնակիցները չպետք է ունենան նախապատվություն այն մասնակիցների նկատմամբ, որոնք գրանցված չեն ցուցակում: Գրանցման համակարգը պետք է թույլատրի մասնակիցներին՝ ցանկացած ժամանակ ներկայացնելու գրանցման հայտեր: Նման ցուցակներում ընդգրկված մասնակիցները իրենց հիմնադրման անդամ երկրում կարող են պահանջել, որոշակի սահմաններում, որ իրենք բավարարում են ընտրության չափորոշիչներին, ինչի հիման վրա տեղի է ունեցել գրանցումը:

### **Մասնակիցների ընտրության ընդհանուր ռազմավարության սահմանում. Հիմնական այն կետերի ստուգացուցակ, որոնք պետք է հասցեագրվեն**

Մասնակիցների ընտրության ընդհանուր ռազմավարությունը պետք է որոշվի մինչև գնման գործընթացը սկիզբը: Այն պետք է սահմանվի այնպիսի ձևով, որ հետևի



իրավունքի ընդհանուր սկզբունքներին, ներառյալ՝ համապատասխան Պայմանագրի դրույթներին, ինչպես նաև՝ ազգային օրենքներին:

Ահա այն հիմնական կետերի ստուգացուցակը, որոնք, ընդհանուր առմամբ, պետական պատվիրատուն պետք է հասցեագրի, երբ սահմանում է մասնակիցների ընտրության ընդհանուր ռազմավարությունը (\* չի կիրառվում բաց ընթացակարգի ժամանակ):

- Սահմանել էք արդյոք ընտրության չափորոշիչների դասակարգը, որը դուք պետք է կիրառեք:
- Սահմանել էք արդյոք հատուկ չափորոշիչները, որը դուք պետք է կիրառեք՝ ընտրված ընտրության չափորոշիչների յուրաքանչյուր դասակարգի ներսում:
- Անհրաժեշտ էք համարում ամրագրել նվազագույն արտադրական հզորություն տնտեսական կամ ֆինանսական դրությանը վերաբերող որևէ չափորոշիչի համար կամ ցանկացած տեխնիկական և/կամ մասնագիտական ունակությունների չափորոշիչ, որը պետք է կիրառվի: Եթե այդպես է, սահմանել էք արդյոք այս նվազագույն մակարդակը:
- Սահմանել էք արդյոք ապացույցը/երաշխավորագրերը, որոնք պետք է պահանջել մասնակիցներից՝ ապացուցելու, որ նրանք բավարարում են ընտրության սահմանված չափորոշիչները:
- \*Սահմանափակ ընթացակարգ, հայտարարությունը նախապես հրապարակելու ձևով բանակցային ընթացակարգ և մրցակցային երկխոսության ընթացակարգի դեպքում պե տակ ան պատվիրատուն պետք է հասցեագրի հետևյալ հարցերը.
  - Սահմանել էք արդյոք մասնակիցների նվազագույն քանակ, որոնք պետք է հրավիրվեն մրցույթի/բանակցությունների/երխոսության վարման:
  - Համարում էք արդյոք անհրաժեշտ ամրագրել մասնակիցների առավելագույն քանակ, որոնք պետք է հրավիրվեն մրցույթի/բանակցությունների/երխոսության վարման: Եթե այդպես է, ապա.
    - Ամրագրել էք այս առավելագույն քանակը
    - Սահմանել էք չափորոշիչներ կամ մեթոդոլոգիաներ, որոնք պետք է կիրառվեն այն մասնակիցների ընտրության համար, որոնք պետք է հրավիրվեն մրցույթի/բանակցությունների/երխոսության վարման որակավորված մասնակիցների թվից:
  - Սահմանել էք, թե արդյոք կան պարտադիր ՆՈՀ (նախաորակավորման հարցաշարերի) օրինակելի ձևեր, որոնք ձեզնից պահանջվում է օգտագործել:
- Սահմանել էք արդյոք, թե կիրառելի իրավունքի պահանջների համաձայն, երբ, որտեղ և ինչպես դուք պետք է բացահայտեք.
  - Ընտրության չափորոշիչները, որոնք դուք կկիրառեք:
  - Ցանկացած նվազագույն արտադրական հզորություն, որը դուք կկիրառեք:

- Ապացույցը/երաշխավորագրերը, որը դուք կպահանջեք:
- մասնակիցների նվազագույն քանակ, որոնց դուք մտադիր եք հրավիրել մրցույթի/բանակցությունների/երխոսության վարման\*:
- մասնակիցների ցանկացած առավելագույն քանակ, որոնց դուք պետք է հրավիրեք մրցույթի/բանակցությունների/երխոսության վարման\* և
- ցանկացած չափորոշիչներ կամ մեթոդալոգիաներ, որը դուք կկիրառեք այն մասնակիցների ընտրության համար, որոնք պետք է հրավիրվեն մրցույթի/բանակցությունների/երխոսության վարման՝ որակավորված մասնակիցների թվից\*

### **Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները**

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն ավելի մեծ ճկունություն ունեն՝ ընտրության չափորոշիչների ընտրության առումով, որոնք կարող են կիրառվել, և ապացույցների/փաստաթղթերի, որոնք կարող են պահանջվել մասնակիցներից: Որպես ընդհանուր կանոն՝ նման կազմակերպությունները, որոնք սահմանում են ընտրության չափորոշիչներ բաց, սահմանափակ կամ բանակցային ընթացակարգերում, պետք է դա իրականացնեն օբյեկտիվ կանոնների և չափորոշիչների համաձայն:

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները կարող են նաև սահմանել և գործարկել որակավորման համակարգեր: Այս համակարգերը պետք է գործարկվեն օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա և որակավորման կանոնները պետք է սահմանվեն կազմակերպության կողմից: Որակավորման համակարգերը նման են Հրահանգով նախատեսված՝ մասնակիցների պաշտոնական ցուցակներին՝ բացառությամբ այն դեպքի, որ դրանք սահմանված են կազմակերպությունների կողմից՝ իրենց սեփական օգտագործման համար:

**Հետագա ընթերցանություն.**

[SIGMA Public Procurement Training Manual](#)